



*ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2017*  
*ՀՈԿՏԵՄԲԵՐ*

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	3
1.1. Ջրամատակարարման համակարգի կառավարում	4
1.2. Ջրաչափերի փոխարինում և տեղափոխում	17
1.3. Ջրահեռացման համակարգ	22
1.4. Կեղտաջրերի մաքրում և հեռացում	25
1.5. Էներգոհամակարգ	27
1.6. Մեքենա-մեխանիզմներ	30
2.ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	33
2.1.Բաժանորդների տվյալներ	33
2.2.Հասույթ	33
2.3.Գանձում	35
2.4.Դերիտորական պարտքեր	35
2.5.Ջրաչափեր	36
2.6. Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում	39
3.ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ	40
3.1.Ջրամատակարարման շարունակականություն	40
3.2.Էլեկտրաէներգիայի կառավարում	41
3.3.Աշխարհագրական տեղեկատվական համակարգ	48
3.4.Կարգավարման խմբի աշխատանքներ	51
4.ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՑԱՆՑ ԵՎ ՍԵՐՎԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ	52
4.1.Համակարգչային ցանց	52
4.2.Ինտերակտիվ համակարգ	52
4.3. Բջջային օպերատորներ և ինտերնետ	53
4.4.Նոր սարքավորումներ և ծրագրեր	54
5.ԼՐԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ	55

# 1. ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻ

## ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Շարունակվում են նախորդ շահագործող ընկերությունների կողմից հայտարարված և փաստացի ջրամատակարարման գրաֆիկների ուսումնասիրություններն ու դրանց միջև անհամապատասխանությունների բացահայտումը: Ի լրումն սեպտեմբեր ամսվա ընթացքում կատարված աշխատանքների ստորև ներկայացվում են ջրամատակարարման գրաֆիկների մասին ուսումնասիրության ամփոփ ցուցանիշները.

<b>Ջրամատակարարման գրաֆիկների բացահայտված խախտումների ամփոփ ցուցանիշներ</b>		
<i>Խախտման տեսակ</i>	<i>Քանակ</i>	<i>Բաժանորդների քանակ</i>
Գրաֆիկում հայտարարված տևողությունից քիչ մատակարարում	430 (խմբավորված հասցեներ)	101.803
Գրաֆիկում հայտարարված տևողությունից շատ մատակարարում	150 (խմբավորված հասցեներ)	28.855
<b>Ընդամենը խախտումների քանակ</b>	<b>580</b>	<b>130.658</b>
Հայտարարված ցանկում չներառված բնակավայրեր/հասցեներ	33	2.348
<b>Ընդհանուր հասցեների, ժամերի և տևողության խախտումների և շեղումների քանակ</b>	<b>613</b>	<b>133.006</b>

## 1.1 Ջրամատակարարման համակարգի կառավարում

### ➤ Քաղաք Երևան

✓ Քանաքեռ ՀԷԿ թաղամասը սնող պոմպակայանի ընդհանուր ջրագծի վրա տեղադրվել է D=80մմ հոսքաչափ, իսկ պոմպակայանում առկա բոլոր անհատական միացումների վրա տեղադրվել են ջրաչափական սարքեր:

Հայտնաբերվել և խցափակվել են մի շարք վթարված ջրագծեր, ջրաքանակի վերահսկման և հաշվարկման նպատակով որոշ շենքերի մուտքագծերի, ցայտաղբյուրների ջրամիացման կետերում տեղադրվել են ջրաչափական սարքեր:

Քանաքեռ ՀԷԿ-ի գոտուց սնվող «Էներգանորոգում» ԲԲ Ընկերության ջրագծի վրա՝ սահմանազատման կետում, տեղադրվել է D=50մմ ջրաչափական սարք, ինչի արդյունքում հայտնաբերվել է 1լ/վ չհաշվառված ջրաքանակ: Վթարի հայտնաբերման և վերացման ուղղությամբ կատարվող աշխատանքները դեռևս շարունակվում են:

Նշված գոտու ջրամատակարարման աշխատանքների արդյունքում խնայվել է 2լ/վ ջրաքանակ:

✓ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի «Շերամի» գոտու բազմաբնակարան շենքերի մուտքագծերի վրա փոխարինվել են թվով 34 հատ D=50 մմ և D=65մմ փականներ, որի արդյունքում կապալառուն հնարավորություն է ստացել անարգել փոխարինել շենքերի ներքին ցանցի ջրաչափերը՝ ջրազրկելով համապատասխան շենքը: Շենքերի մուտքագծերի վրա տեղադրվել են նաև 42 հատ ջրաչափ, որոնք մոնտաժվել են համապատասխան լաբորատոր հետազոտություն և ստուգաչափում անցնելուց հետո:

Նշված շենքերի ներքին ցանցերում վերացվել է թվով 5 վթար, ինչպես նաև Շերամի 51 և 49 շենքերի բակում հայտնաբերվել է ասֆալտբետոնե ծածկի տակ մնացած դիտահոր՝ վթարված ջրագծերով և չաշխատող փականներով, որոնք կարգավորվել են և բերվել աշխատանքային վիճակի:


Գոտիավորման խմբի կողմից հայտնաբերվել է թվով 3 գաղտնի վթար, որոնց վերացումից հետո գոտի մտնող ջրաքանակը նվազել է 5լ/վ-ով:

Ջրաքանակը ճշգրիտ հաշվարկելու համար իրականացվում են «Շերամի գոտու» ցայտաղբյուրների ուսումնասիրում և ջրաչափերի տեղադրում:


Բացի չհաշվառված ջրաքանակի ծավալների կրճատման նպատակից, նշված գոտում վերանորոգվել են մի շարք քանդված դիտահորեր, փոխարինվել ծածկեր և դրանցում առկա կոռոզիայի ենթարկված խողովակներ:

Վերոնշյալ բոլոր աշխատանքները շարունակվում են:


✓ Արաբկիր 37 շենքը սնուցող  $D=50$ մմ ջրագծի վրա հայտաբերված վթարի վերացման նպատակով գործող ջրագծի մեջ ներարկվել է  $D=25$ մմ  $L=50$ մ պոլիէթիլենային ջրագիծ: Արդյունքում խնայվել է  $Q=1$ լ/վ ջրաքանակ:



✓ Վարշավյան փողոցի երաժշտական դպրոցը սնուցող  $D=100$ մմ ջրագծի վրա հայտաբերված վթարը վերացնելու համար այդ ջրագծի մեջ նույնպես ներարկվել է  $D=25$ մմ  $L=26$ մ պոլիէթիլենային ջրագիծ: Արդյունքում խնայվել է  $Q=2$ լ/վ ջրաքանակ:



✓ Ծարավ Աղբյուր փողոցի N85 դպրոցի  $D=50$ մմ ջրագծի վրա հայտնաբերվել էր վթար, որի վերացման նպատակով ջրագծի մեջ ներարկման եղանակով տեղադրվել է  $D=32$ մմ,  $L=70$ մ պոլիէթիլենային ջրագիծ: Կատարված աշխատանքների արդյունքում շահագործումից հանվել է  $D=50$ մմ  $L=70$ մ վթարային ջրագիծ և խնայվել է  $Q=1.5$ լ/վ ջրաքանակ:



✓ Նոր Արեշ 50 փողոցի նրբանցքի  $D=400$ մմ թուջե ջրագիծը անցնում էր սեփական տնատիրությունների տակով, ինչի պատճառով առկա վթարները հայտնաբերելը և վերացնելը գրեթե անհնար էր: Ջրակորուստներից և վթարներից խուսափելու համար  $D=400$ մմ  $L=650$ մ ջրագիծը շահագործումից հանվել է: Նշված ջրագծից սնվող թվով 20 բաժանորդներից մեկի ջրամատակարարումը վերականգնվել է Գ. Մահարու փողոցից դեպի Նոր Արեշ փողոց գնացող  $D=200$ մմ պոլիէթիլենային ջրագծից, իսկ մնացած 19 բաժանորդներինը՝ Նոր Արեշ 50 փողոցով անցնող  $D=800$ մմ պողպատե ջրագծից: Աշխատանքների արդյունքում խնայվել է մոտ 10լ/վ ջրաքանակ:



✓ Ներքին Չարբախ 3 փողոցում իրականացված վթարավերականգնողական աշխատանքների ընթացքում խցափակվել և շահագործումից հանվել է D=100մմ L=170մ պողպատե վնասված ջրագիծը, իսկ ջրագծից սնվող թվով 3 առանձնատների ջրամիացումներն իրականացվել են նույն փողոցով անցնող D=100մմ ջրագծից՝ L=6մ պողպատե խողովակներով: Կատարված աշխատանքների արդյունքում տնտեսվել է 4լ/վ ջրաքանակ:




✓ «Հարավ» տեղամասի և գոտիավորման խմբի աշխատակիցների կողմից տեղամասի սպասարկման տարածքում իրականացված վթարաորոնողական աշխատանքների շրջանակներում Մանանդյան 1ա հասցեում՝ դիտահորի մեջ, հայտնաբերվել և D=50մմ խողովակի խցափակման միջոցով վերացվել է վթար, որի արդյունքում տնտեսվել է մոտ 6լ/վ ջրաքանակ:

### ➤ Քաղաք Գյումրի


Քաղաքի ջրամատակարարման ցանցում առկա էին հին ջրագծեր, որոնք շահագործվում էին նոր կառուցված ջրագծերի հետ համատեղ: Գոտիավորման խմբի ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել են հին ջրագծերի սնուցման կետերը, որոնք խցափակումով հանվել են շահագործումից: Ընդհանուր առմամբ շահագործումից հանվել է L=11.538մ վթարային ջրագիծ, ինչի արդյունքում խնայվել է Q=60լ/վ ջրաքանակ: Կատարված աշխատանքների արդյունքում «օդանավակայան» թաղամասն այժմ ապահովված է շուրջօրյա ջրամատակարարումով, իսկ «Մայիսյան»

ՕԿՁ-ից սնվող մյուս գոտիներում ջրամատակարարումը բարելավվել է, ցանցը դարձել է կառավարելի և վերացել են ջրի ճնշման հետ կապված խնդիրները:


**Գյումրի քաղաքի Մուսայելյան փողոցի ջրամատակարարման սխեման**



**Գյումրի քաղաքի Երևանյան խճուղու ջրամատակարարման սխեման**



**Գյումրի քաղաքի Խրիմյան Հայրիկ փողոցի ջրամատակարարման սխեման**




➤ **Քաղաք Էջմիածին**


Քաղաքը սնող «Շահումյան» ՕԿՁ-ից առկա են դուրս եկող D=500մմ քայքայված և վթարային ու D=600մմ բարվոք վիճակում գտնվող ջրագծեր: D=500մմ ջրագիծը շահագործումից հանելու նպատակով դրա բոլոր ջրամիացումները տեղափոխվել են D=600մմ ջրագծի վրա, իսկ D=500մմ սնման կետը խցափակվել է: Արդյունքում շահագործումից հանվել է L=3700մ վթարային ջրագիծ: Այժմ քաղաքի ջրամատակարարումն իրականացվում է կառավարելի մեկ փականի և վթարային հատվածներ չունեցող D=600մմ ջրագծի միջոցով, որի արդյունքում ցանցը դարձել է հուսալի և վերահսկելի:

**«Շահումյան» ՕԿՁ-ի ջրամատակարարման սխեմա**

*աշխատանքներից առաջ*




*աշխատանքներից հետո*



➤ **Քաղաք Հրազդան**

Քաղաքի Հյուսիսային ՕԿՁ-ից դեպի քաղաք սնուցող D=250մմ ջրագծի վրա հայտնաբերված վթարի վերացման նպատակով այդ ջրագծի մեջ ներարկվել է D=200մմ L=40մ պոլիէթիլենային ջրագիծ: Արդյունքում խնայվել է Q=6լ/վ ջրաքանակ:



➤ **Քաղաք Դիլիջան**



«Դիլիջան» տեղամասի և գոտիավորման խմբի աշխատակիցների կողմից համատեղ կատարված վթարաորոնողական աշխատանքների շրջանակներում «Ֆլորովա» մաքրման կայանում հայտնաբերվել և կանխվել է անհայտ ջրթողից արտահոսք: Արդյունքում տնտեսվել է մոտ 7լ/վ ջրաքանակ:

➤ **Քաղաք Սևան**

✓ Նալբանդյան փողոցում գտնվող 5 հարկանի թվով 4 (հանրակացարաններ), 6 հարկանի թվով 3 և թվով 1 9 հարկանի շենքերի ջրամատակարարումն իրականացվում էր մեկ ընդհանուր պոմպով, իսկ պոմպը սնուցող ջրագծի վրա առկա էին բազմաթիվ վթարներ, քանի որ այն ամբողջովին քայքայված էր:






«Սևան» տեղամասի և գոտիավորման խմբի աշխատակիցների կողմից համատեղ կատարած աշխատանքների արդյունքում շահագործումից հանվել է պոմպը և անջատվել են  $D=50-160$ մ  $L=370$ մ ընդհանուր երկարությամբ վթարային ջրագծերը: Պատշաճ ջրամատակարարում ապահովելու համար 9 և 6 հարկանի թվով 4 շենքերի համար կառուցվել է նոր  $D=110$ մ  $L=110$ մ



պոլիէթիլենային ջրագիծ, որը միացվել է էներգետիկների փողոցով անցնող  $D=200$ մ պոլիէթիլենային ջրագծից, իսկ 5 հարկանի թվով 4 շենքերի համար կառուցվել է  $D=63$ մ  $L=75$ մ և  $D=32$ մ  $L=35$ մ պոլիէթիլենային ջրագիծ՝ միացնելով Շինարարների փողոցով անցնող  $D=160$ մ պոլիէթիլենային ջրագծից:



Կատարված աշխատանքների արդյունքում շենքերի ջրամատակարարումն իրականացվում է ինքնահոս եղանակով՝ ապահովելով անհրաժեշտ ճնշումը: Ավելացել է նաև ջրամատակարարման շարունակականությունը, ինչպես նաև տնտեսվել է 5լ/վ ջրաքանակ և ամսական մոտ 1000կՎտ էլեկտրաէներգիա:



✓ Գումաձոր թաղամասի մոտ 30 տների ջրամատակարարումն իրականացվում էր պոմպի միջոցով՝ գրաֆիկի խախտումով: Գոյություն ունեցող թուջե և պողպատե ջրագծերը գտնվում էին քայքայված և վթարված վիճակում: Ջրամատակարարումը կարգավորելու նպատակով շահագործումից հանվել են  $D=150$ մ  $L=800$ մ և  $D=100$ մ  $L=100$ մ վթարային ջրագծերը և պոմպը, կառուցվել են նոր  $D=63$ մ  $L=100$ մ ու  $D=15$ մ  $L=65$ մ ջրագծեր, վերացվել են մի շարք վթարներ:

Կատարված աշխատանքների արդյունքում ջրամատակարարումն իրականացվում է ինքնահոս եղանակով և շուրջօրյա գրաֆիկով, ինչպես նաև պոմպի շահագործումից

հանելու արդյունքում խնայվել է ամսական մոտ 400կՎտ էլեկտրաէներգիա և մոտ 5լ/վ ջրաքանակ:



✓ «Սևան» տեղամասի սպասարկման տարածքում կատարված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում Լճաշեն գյուղում՝ ջրաչափական դիտահորի մեջ, հայտնաբերվել և վերացվել է վթար, որի արդյունքում տնտեսվել մոտ 5 լ/վ ջրաքանակ:




### ➤ Քաղաք Աշտարակ


Աշտարակ քաղաքի Կարին թաղամասում կատարված ուսումնասիրությունների արդյունքում հայտաբերվել և խցափակվել է D=200մմ L=2000մ հին չշահագործվող վթարված ջրագիծ: Արդյունքում խնայվել է Q=2լ/վ ջրաքանակ:

#### Կարին թաղամասի ջրամատակարարման սխեման

##### աշխատանքներից առաջ



##### աշխատանքներից հետո



➤ **Քաղաք Մեծամոր**

Քաղաքի թիվ 2 թաղամասի N2 միջնակարգ դպրոցը, N2 մտուր-մանկապարտեզը և



Արմավիրի ոչ պետական համալսարանը սնող  $D=100$ մմ  $L=280$ մ պողպատե ջրագիծն ամբողջովին քայքայված էր: Վթարային վիճակում գտնվող  $L=280$ մ ջրագծի հատվածը ներթափանցման միջոցով փոխարինվել է  $D=50$ մմ պոլիէթիլենային խողովակներով: Ջրագծի փոխարինման

արդյունքում կարգավորվել են ջրագծում առկա ավելցուկային ճնշումները, ինչպես նաև խնայվել է մոտ 1.5լ/վ ջուր:



➤ **Քաղաք Վայք**

Ջերմուկի խճուղի 7 հասցեի  $D=500$ մմ թուջե ջրագծից միացված և Շահումյան փողոցի 1-ից 2/6 հասցեները սնող  $D=200$ մմ թուջե ջրագիծը, որը կառուցվել էր 1960-ական թվականներին, ամբողջովին քայքայվել էր: Ջուրը կոռոզիայի ենթարկված խողովակներից ներծծվելով հողի մեջ լցվում էր սեփական տնատիրությունների նկուղային հարկերը՝ առաջացնելով բնակիչների դժգոհությունը:

«Վայք» տեղամասի աշխատակիցների կողմից շահագործումից հանվել է քայքայված  $D=200$ մմ  $L=500$ մ թուջե ջրագիծը, իսկ Շահումյան փողոցի 1-ից 2/6 հասցեների ջրամատակարարումը վերականգնվել է Շահումյան փողոցով անցնող  $D=325$ մմ պողպատե ջրագծից՝ կառուցելով  $D=32$ մմ  $L=6$ մ պոլիէթիլենային ջրագծեր: Արդյունքում կարգավորվել է վերոնշյալ հասցեների ջրամատակարարումը և տնտեսվել է 6լ/վ ջրաքանակ:



➤ **«Մուխուրթուրյան-Գորիս» ջրատար**

Հայտաբերվել և զոդման միջոցով վերացվել է «Մուխուրթուրյան-Գորիս» D=530մմ պողպատե ջրատարի վրա առկա վթարը: «Զույգ Աղբյուր» ակունքից դեպի Գորիս ձգվող ջրատարի 5-6կմ հատվածում առաջացած ճեղքից առկա էր ջրի մեծ արտահոսք: Իրականացված վթարավերականգնողական աշխատանքների արդյունքում տնտեսվել է 80-90լ/վ ջրաքանակ:



➤ **Քարակերտ համայնք**

Մ. Խորենացու փողոցի D=125մմ L=1000մ պողպատե ջրագիծը ենթարկվել էր կոռոզիայի և գտնվում էր խիստ վթարային վիճակում: Կոռոզիայի հետևանքով շարքից դուրս էր եկել նաև թվով 50 բաժանորդների մուտքագծերը: «Արմավիր» տեղամասի աշխատակիցների կողմից քայքայված պողպատե խողովակները փոխարինվել են նոր D=125մմ պոլիէթիլենային խողովակներով: Նոր մետալոպլաստե խողովակներով միացվել են թվով 50 բաժանորդների մուտքագծերը, ինչպես նաև 29 բաժանորդների ջրաչափական դիտահորերը և ջրաչափական հանգույցները դուրս են բերվել բաժանորդի սեփականություն հանդիսացող տարածքից (մնացած 21-ի դիտահորերը և ջրաչափերը

նախկինում տեղադրված են եղել սեփական տարածքից դուրս): Ջրագծի փոխարինման արդյունքում վերացել է ավելցուկային ճնշման խնդիրը, բարելավվել է ջրամատակարարման որակը:



➤ **Ջերմանիստ համայնք**

«Արջի աղբյուր» կոչվող վայրում, կապտաժից դուրս եկող D=110մմ նոր կառուցված ջրագծի և գոյություն ունեցող հին D=100մմ ջրագծի միացման հանգույցներն իրարից անջատվել էին, որի հետևանքով առկա էր ջրակորուստ:

Կատարված վթարավերականգնողական աշխատանքների արդյունքում խնայվել է մոտ 2լ/վ ջրաքանակ:



➤ **Նորաբաց համայնք**


Նոր թաղամաս 4-րդ փողոցի ջրագիծը, որը բնակիչների կողմից կառուցվել էր 1990-ական թվականներին տարբեր տեսակի նախկինում օգտագործված խողովակներից, գտնվում էր քայքայված վիճակում: Ջրագծում ճնշման ցածր լինելու պատճառով, ցանկացած տատանման հետևանքով առաջանում էին նոր վթարներ: Խնդրի կարգավորման համար կառուցվել է նոր D=15-63մմ L=500մ ջրագիծ, տեղադրվել է թվով 24 ջրաչափական հոր՝ D=15մմ փականային հանգույցներով: Արդյունքում բարձրացել է ցանցի կառավարելիության հուսալիությունը, վերացվել են ապօրինի միացումները, խնայվել է 6լ/վ ջրաքանակ:

➤ **Փարաքար համայնք**


Նպատակ ունենալով Փարաքար համայնքում բարելավել ջրամատակարարումը, ավելացնել շարունակականությունը, ցանցը դարձնել կառավարելի և հուսալի, ինչպես

նաև կրճատել վթարների վրա ծախսող միջոցներն ու ժամանակը, «Շահումյան» տեղամասի կողմից կառուցվել է  $D=160$ մմ  $L=354$ մ և  $D=110$ մմ  $L=355$ մ ջրագիծ՝ առանձնացնելով ՕԿՁ-ի ջրագիծը: Նախկինում ջրամբարը լցնելու համար պահանջվում էր գյուղի ցանցում ճնշումը հասցնել 5մթն-ի՝ առաջացնելով բազմաթիվ վթարներ և խախտելով ջրամատակարարման գրաֆիկները: Այժմ գյուղի ջրամատակարարման սևողությունն ավելացել է՝ հասնելով գրեթե 22 ժամի, նախկին 8-10 ժամի փոխարեն: Վերացել են հաճախակի կրկվող վթարները և խնայվել է  $Q=3-5$ լ/վ ջրաքանակ:

**Փարաքարի ջրամատակարարման սխեման աշխատանքներից առաջ**



**Փարաքարի ջրամատակարարման սխեման աշխատանքներից հետո**



➤ **Վերին Արտաշատ և Նորաշեն համայնքներ**

Արարատի մարզում ուսումնասիրվել են Վերին Արտաշատ և Նորաշեն համայնքների, Շնկերության բաժանորդ հանդիսացող, տնաստիությունները՝ ընդհանուր խնդիրները հասկանելու և լուծման ուղիներ գտնելու համար:

Համաձայն ուսումնասիրությունների՝ Վերին Արտաշատ և Նորաշեն գյուղերի ընդհանուր բաժանորդների՝ համապատասխանաբար 21% և 23%-ն ունեն որոշակի խնդիրներ: Դրանք գույքագրվել և ուղարկվել են համապատասխան ստորաբաժանմանը՝ խնդիրները վերացնելու համար:

Համայնք	Բաժանորդների քանակ	Խնդրահարուց հասցեներ	Կասկածելի ջրաչափեր (2 և ավել տվյալ անընթեռնելի է)	Վնասված կամ չաշխատող ջրաչափ	Կնիքի բացակայություն	Կտրված-քով հաշվարկ	Ապօրինի միացում	Սեփ.տա-բաժք (հնարավոր չէր կատարել տեղազննում)	Փակ դուռ
Վ.Արտաշատ	639	135	29	2	50	3	2	27	26
Նորաշեն	551	147	17	8	70	0	1	18	37
<b>Ընդամենը</b>	<b>1190</b>	<b>282</b>	<b>46</b>	<b>10</b>	<b>120</b>	<b>3</b>	<b>3</b>	<b>45</b>	<b>63</b>

Ստորև ներկայացվում է հաշվետու ժամանակահատվածում Շահագործման Տարածաշրջանների Տնօրինությունների կողմից կատարված աշխատանքները աղյուսակային տեսքով:

### Աշխատանքների հակիրճ նկարագիրը

Կատարված աշխատանքները	Չափման միավոր	Քանակ
Չափում հոսքաչափով	տեղ	1326
Որոնում խողովակափնտրիչ սարքով	մ	20450
Հոսակորուստի որոնում ակվաֆոնով	մ	11805
Հոսակորուստի որոնում կորեյատորով	մ	7050
Ջրաչափական հանգույնցներ ուսումնասիրություն, սխեմաների կազմում	հատ	17
Շահագործումից հանված ջրագիծ	մ	20601
Կառուցված ջրագիծ	մ	3498.5
Շահագործումից հանված կոյուղագիծ	մ	6
Կառուցված կոյուղագիծ	մ	342
Վերացված գաղտնի վթարներ	հատ	155
Փոխարինված փական	հատ	187
Խնայված էլ.էներգիա	կՎտ/ժամ	1400
Տեղափոխված/փոխարինված ջրաչափական հանգույց	հատ	225
Մաքրված դիտահոր	հատ	2557
Գաղտնի վթարների վերացման արդյունքում տնտեսված ջրաքանակ	լ/վ	190.1
<b>Վերացված վթարներ</b>		
Ջրամատակարարման ցանցում	հատ	2172
Ջրահեռացման ցանցում	հատ	4097
Պոմպակայաններում	հատ	126
Մաքրված անձրևընդունիչ	հատ	2332

Հոկտեմբեր ամսվա ընթացքում վերացված վթարների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև բերված աղյուսակում:

h/h	Տեղամաս	Տեղի ունեցած վթարների քանակը		
		Պոլիէթիլենային խողովակներ	Մետաղական խողովակներ	Այլ
1.	Արաբկիր	5	67	0
2.	Զեյթուն	0	50	0
3.	Մաշտոց	6	35	0
4.	Շահումյան	3	39	0
5.	Ալավերդի	6	29	0
6.	Բերդ	10	9	0
7.	Նոյեմբերյան	13	32	0
8.	Իջևան	4	24	0
9.	Ստեփանավան	23	3	0
10.	Տաշիր	4	22	0
11.	Ապարան	2	22	0
12.	Լոռի	51	60	0
13.	Շիրակ	79	287	0
14.	Արթիկ	18	24	0
15.	Սպիտակ	9	23	0
16.	Թալին	8	12	0
17.	Աշոցք	3	14	0
18.	Էջմիածին	15	40	0
19.	Աշտարակ	5	13	0
20.	Հրազդան	17	8	0
21.	Զարենցավան	11	9	0
22.	Աբովյան	6	14	0
23.	Կենտրոն	0	78	15
24.	Հյուսիս	0	40	24
25.	Հարավ	3	45	0
26.	Էրեբունի	12	120	17
27.	Արմավիր	0	94	0
28.	Արտաշատ	64	51	0
29.	Արարատ	30	33	7
30.	Մասիս	41	20	5
31.	Գավառ	19	20	0
32.	Սևան	26	19	1
33.	Մարտունի	0	14	0
34.	Վարդենիս	0	3	2
35.	Ճամբարակ	1	0	0
36.	Դիլիջան	21	31	0
37.	Վայք	9	7	0
38.	Եղեգնաձոր	9	10	0
39.	Զեյրուկ	16	3	5
40.	Սիսիան	37	22	0
41.	Գորիս	19	13	0
42.	Կապան	4	21	0
43.	Մեղրի	4	3	0
<b>Ընդամենը</b>		<b>613</b>	<b>1483</b>	<b>76</b>



## 1.2. Ջրաչափերի փոխարինում և տեղադրում

Հաշվետու ամսվա ընթացքում փոխարինվել, տեղադրվել կամ սահմանազատման կետ են տեղափոխվել տարբեր տրամագծերի ջրաչափեր:

Հ/Հ	Հասցե	D (մմ)	Քանակ	Նշում
1.	Իջևանի թիվ 51191 գորմանաս	50	1	Տեղադրված
2.	Շիրակի մարզ գյուղ Ջուլգաղբյուր «Դուստր Մարիաննա» ՍՊԸ	25	1	Տեղադրված
3.	Շիրակի մարզ գյուղ Թավշուտ /Թավշուտի միջն.դպրոց	15	1	Տեղադրված
4.	ք.Մարալիկ, Գագարինի փողոց	50	1	Տեղադրված
5.	ք. Մարալիկ, Նոր թաղամաս	50	1	Տեղադրված
6.	ք. Գյումրի, Հ. Հովհաննիսյան Ա/Ձ	25	1	Տեղադրված
7.	ք.Չարենցավան Քոչարի փողոց 3 փակուղի 1 ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ (Կադաստր)	15	1	Տեղադրված
8.	գ. Վահագնի, Վանաձոր-Ալավերդի խճ. 11/3 «Մանասար Ներսիսյան» ՍՊԸ	15	1	Տեղադրված
9.	Երևանյան խճուղի 2, Սպիտակի բժշկական կենտրոն ՓԲԸ	40	1	Տեղադրված
10.	ք.Ծաղկաձոր Պահլավունյանց 18/5 «Պարկ Վիլլիջ» ՍՊԸ	20	1	Տեղադրված
11.	ք.Ծաղկաձոր Ծաղկունյանց հրապարակին հարող տարածք «Յուպիտեր հոթել» ՍՊԸ	32	1	Տեղադրված
12.	ք. Սպիտակ, Երևանյան խճուղի 2 Սպիտակի բժշկական կենտրոն ՓԲԸ /հիվանդանոց/	40	1	Տեղադրված
13.	ք. Սպիտակ, Երևանյան խճուղի Սպիտակի բժշկական կենտրոն ՓԲԸ /պոլիկլինիկա/	40	1	Տեղադրված
14.	ք. Սպիտակ, Երևանյան խճուղի «Սպ. Այվազյան» ֆիզ. Անձ	20	1	Տեղադրված
15.	ք. Սպիտակ, Երևանյան խճուղի «Արվեստ» ՍՊԸ	20	1	Տեղադրված
16.	ք. Սպիտակ, Երևանյան խճուղի «Իմ թերթը» ՍՊԸ	20	1	Տեղադրված
17.	ք. Արթիկ, Տուֆ-Քառյակ ՍՊԸ	15	1	Տեղադրված
18.	ք. Տաշիր, «Սեդրակ-Տիգրան» ՍՊԸ, Գետափնյա 8	15	1	Տեղադրված
19.	ք. Տաշիր, «Վիլիջ» ՍՊԸ Երևանյան 1	15	1	Տեղադրված
20.	ք. Տաշիր, «Դուստր-Մելանյա» ՍՊԸ, Երևանյան 11	40	1	Տեղադրված
21.	ք. Տաշիր, «Դուստր-Մելանյա» խանութ, Երևանյան 11	25	1	Տեղադրված
22.	ք. Տաշիր, «Արմեն Սուքիասյան» ՍՊԸ Պուշկին 8	15	1	Տեղադրված
23.	ք. Տաշիր, «Աշոտ Սուքիասյան» Ա/Ձ Վ.Սարգսյան 8	15	1	Տեղադրված
24.	ք. Տաշիր, «Կալինինո Կաթ» ՍՊԸ, Պուշկին 5	15	1	Տեղադրված
25.	ք. Տաշիր, «Շալիկո Սողոյան» ՍՊԸ, Պուշկին 3	15	1	Տեղադրված
26.	ք. Տաշիր, «Դումիկյան եղբայրներ» ՍՊԸ Երևանյան 14	25	1	Տեղադրված
27.	ք. Տաշիր, «Տաշիր Կաթ» ՍՊԸ, Ջահուկյան 6	50	1	Տեղադրված
28.	ք. Տաշիր, Լոյսեբերանի Զինկոմիսարիաստ, Հ. Շիրազի 31	15	1	Տեղադրված
29.	ք. Արթիկ, Սիթի-Ցենտր Ա/Ձ	15	1	Տեղադրված
30.	ք. Արթիկ, Արթիկի պետական քոլեջ	15	1	Տեղադրված
31.	ք. Արթիկ, «Ստեկլոմաշ» ԲԲԸ	50	1	Տեղադրված
32.	ք. Արթիկ, Արթիկի գլխավոր պանրագործարան	15	1	Տեղադրված

33.	գ. Ամասիա, 2 փ., 2 փկ., «Կաթի գործարան» ՍՊԸ	40	1	Տեղադրված
34.	ք. Վանաձոր, «Առավոտ լուս» ՍՊԸ	50	1	Տեղադրված
35.	ք. Աբովյան Սևանի 6, «Ականթ» ՍՊԸ	50	1	Տեղադրված
36.	ք. Աբովյան Սևանի 6, «Մուլտի Գրուպ Սթոուն» ՓԲԸ	50	1	Տեղադրված
37.	ք. Աբովյան Սևանի 6, «ՍԸՆԴՍ» ՍՊԸ	20	1	Տեղադրված
38.	ք. Վանաձոր «Լոռի ՃՇՇ» ՓԲԸ	15	1	Տեղադրված
39.	ք. Վանաձոր «Զին.մաս 72035», հոսպիտալ	32	1	Տեղադրված
40.	ք. Վանաձոր «Զին.մաս 72035», լվացքատուն	20	1	Տեղադրված
41.	ք. Վանաձոր, «Մանկատուն» ՊՈԱԿ	25	1	Տեղադրված
42.	ք. Աբովյան Երևանյան փ 1/20, Ա/Ձ Ա. Վարդանյան	20	1	Տեղադրված
43.	ք. Երևան, Ծ. Աղբյուր փ., 85 դպրոց	25	1	Տեղադրված
44.	ք. Ծաղկաձոր, «Մուլտի Ռեստ Հաուս»	80	1	Տեղադրված
45.	Երևանշին ԲԲԸ, Գյումրի մասնաճյուղ (Շիրակի մարզի ընդհ. իրավասության դատարան)	40	1	Տեղադրված
46.	Կ. Ուլնեցի փ. 6/7	50	1	Տեղադրված
47.	ք. Երևան, Շիրազի 50	15	1	Տեղադրված
48.	ք. Աշտարակ, Նոր ջրաղաց ռեստորան	32	1	Տեղադրված
49.	ք. Հրազդան Շահումյան 4 Բազրատ Առաքելյան Ա/Ձ	20	1	Տեղադրված
50.	ք. Ծաղկաձոր Գ. Մագիստրոսի փողոց Յուրա Մանուկյան Ա/Ձ	25	1	Տեղադրված
51.	ք. Հրազդան Հացագործների 9 «Հրազդան հաց» ՍՊԸ	15	1	Տեղադրված
52.	ք. Հրազդան «Մկրտիչ Ղարազյոզյան» ՍՊԸ	40	1	Տեղադրված
53.	ք. Հրազդան «Հայկ Պողոսյան» ՍՊԸ	15	1	Տեղադրված
54.	ք. Ծաղկաձոր Ավ. Բասակյանի փողոց «Ազամիգ» ՍՊԸ	50	1	Տեղադրված
55.	ք. Ծաղկաձոր Գրիգոր Մագիստրոսի փողոց «Նիկո Ինթերնեյշնլ» ՍՊԸ	20	1	Տեղադրված
56.	ք. Ծաղկաձոր Գրիգոր Մագիստրոսի փողոց «Նիկո Ինթերնեյշնլ»	50	1	Տեղադրված
57.	ք. Ծաղկաձոր Խաչիկ Մուրադյանի փողոց ՀՀ Կենտրոնական բանկի ՕՏԴԿ	50	1	Տեղադրված
58.	Գ. Նոր-Գեղի, Բանավան թաղ, Վ. Սարգսյան 8տ	15	1	Տեղադրված
59.	Գրիբոյեդով 60դ/հ-ում	32	1	Տեղադրված
60.	Քանաքեռ ՀԷԿ պ/կ	15	1	Տեղադրված
61.	Քանաքեռ ՀԷԿ 2շենքի դ/հ-ում	15	1	Տեղադրված
62.	Քանաքեռ ՀԷԿ 2շենքի դ/հ-ում	15	1	Տեղադրված
63.	Քանաքեռ ՀԷԿ 6շ	50	1	Տեղադրված
64.	Քանաքեռ ՀԷԿ 3շ	50	1	Տեղադրված
65.	ք. Այրում, «Միգ» ՍՊԸ	20	1	Տեղադրված
66.	ք. Դիլիջան Ա. Ա. Ծ. Դիլիջանի բաժին	20	1	Նոր տեղադրված
67.	Դիլիջան, Ձ/Մ 81152	50	1	Նոր տեղադրված
68.	Դիլիջան, Ձ/Մ 81153	50	1	Նոր տեղադրված
69.	Դիլիջան, Ձ/Մ 41507	15	1	Նոր տեղադրված
70.	Սիսիան, Գ. Նորավան, Ձ/Մ 37564	50	1	Նոր տեղադրված
71.	Գորիս, Ձ/Մ 60369	15	1	Փոխարինված
72.	Գորիս, Ձ/Մ 60369	50	1	Փոխարինված
73.	Եղեգնաձոր, Ձ/Մ 27527	15	1	Փոխարինված
74.	Եղեգնաձոր, Ձ/Մ 27527	20	1	Փոխարինված
75.	Եղեգնաձոր, Ձ/Մ 27527	20	1	Փոխարինված
76.	Եղեգնաձոր, Ձ/Մ 27527	20	1	Փոխարինված

77	Եղեգնաձոր, Ձ/Մ 27527	40	1	Փոխարինված
78	Վայք, Ձ/Մ 24647	20	1	Փոխարինված
79	Վայք, Ձ/Մ 24647	20	1	Փոխարինված
80	Ք. Գորիս, Անկախության 4, Քաղաքապետարան	40	1	Նոր տեղադրված
81	Ք. Արտաշատ, Կոնվերս Բանկ	20	1	Փոխարինված
82	Արտաշատ, գ. Մրգավետ, միջնակարգ դպրոց	20	1	Փոխարինված
83	Մայիսյան 52/1,	15	1	Փոխարինված
84	ք. Արմավիր, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ	20	1	Փոխարինված
85	ք. Կապան, «Գրիգ Բիզնես»	20	1	Փոխարինված
86	ք. Կապան, «ՄԻ ԸՆԴ ՄԱՔՍ» ՍՊԸ	20	1	Փոխարինված
87	Գորիս, Մ.Մաշտոցի 42, 32424 զինմաս	15	1	Փոխարինված
88	Գ. Քարակերտ, Խորենացու փ. 2 տուն, Ռաֆիկ Մարտիրոսյան	15	1	Տեղափոխված
89	Գ. Քարակերտ, Խորենացու փ. 5 տուն, Հակոբ Շահնազարյան	15	1	Տեղափոխված
90	Գ. Քարակերտ, Խորենացու փ. 7 տուն, Համլետ Շահնազարյան	15	1	Տեղափոխված
91	Գ. Քարակերտ, Խորենացու փ. 9 տուն, Խաթուն Շահնազարյան	15	1	Տեղափոխված
92	Գ. Քարակերտ, Խորենացու փ. 11 տուն, Կարինե Շահնազարյան	15	1	Տեղափոխված
93	Գ. Քարակերտ, Խորենացու փ. 13 տուն, Նադարշ Մխիթարյան	15	1	Տեղափոխված
94	Գ. Քարակերտ, Խորենացու փ. 15 տուն, Ռոբերտ Շահնազարյան	15	1	Տեղափոխված
95	Գ. Քարակերտ, Խորենացու փ. 19 տուն, Լևոն Ռախյան	15	1	Տեղափոխված
96	Գ. Քարակերտ, Խորենացու փ. 21 տուն, Կարեն Հակոբյան	15	1	Տեղափոխված
97	Գ. Քարակերտ, Խորենացու փ. 23 տուն, Հովհաննես Հովհաննիսյան	15	1	Տեղափոխված
98	Գ. Քարակերտ, Խորենացու փ. 33/1 տուն, Մայրանուշ Գաբրիելյան	15	1	Տեղափոխված
99	Գ. Քարակերտ, Խորենացու փ. 43 տուն, Անահիտ Կարապետյան	15	1	Տեղափոխված
100	Գ. Քարակերտ, Խորենացու փ. 45 տուն, Աստղիկ Ավետիսյան	15	1	Տեղափոխված
101	Գ. Քարակերտ, Խորենացու փ. 47 տուն, Արգամ Մելիքյան	15	1	Տեղափոխված
102	Գ. Քարակերտ, Խորենացու փ. 53 տուն, Արտակ Շահնազարյան	15	1	Տեղափոխված
103	Գ. Քարակերտ, Խորենացու փ. 55 տուն, Գագիկ Մնացականյան	15	1	Տեղափոխված
104	Գ. Քարակերտ, Խորենացու փ. 57 տուն, Նառա Շաքարյան	15	1	Տեղափոխված
105	Գ. Քարակերտ, Խորենացու փ. 63 տուն, Մարուսյա Գևորգյան	15	1	Տեղափոխված
106	Գ. Քարակերտ, Խորենացու փ. 65 տուն, Մանվել Բաղդոյան	15	1	Տեղափոխված
107	Գ. Քարակերտ, Խորենացու փ. 67 տուն, Թամարա Իգիթյան	15	1	Տեղափոխված
108	Գ. Քարակերտ, Խորենացու փ. 71 տուն, Հայկարամ Պետրոսյան	15	1	Տեղափոխված
109	Գ. Քարակերտ, Խորենացու փ. 75 տուն, Միսակ Բաղեյան	15	1	Տեղափոխված
110	Գ. Քարակերտ, Խորենացու փ. 77 տուն, Խոսրով Բաղեյան	15	1	Տեղափոխված
111	Գ. Քարակերտ, Խորենացու փ. 81 տուն, Հայկ Խաչատրյան	15	1	Տեղափոխված
112	Գ. Քարակերտ, Խորենացու փ. 83 տուն, Գագիկ Խաչատրյան	15	1	Տեղափոխված
113	Գ. Քարակերտ, Խորենացու փ. 85 տուն, Համլետ Դանիելյան	15	1	Տեղափոխված

114	Գ. Քարակերտ, Խորենացու փ. 87 տուն, Գագիկ թովմասյան	15	1	Տեղափոխված
115	Գ. Քարակերտ, Խորենացու փ. 89 տուն, Լավրենտի Կիրակոսյան	32	1	Տեղափոխված
116	Գ. Քարակերտ, Խորենացու փ. 97 տուն, Վրույր Հեքիմյան	15	1	Տեղափոխված
117	Գորիս, գ. Խնածախ խաչմ., N- 83117 գորամաս	40	1	Փոխարինված
118	Գորիս, Անկախության 64, N-16396 գորամաս	15	1	Նոր տեղադրված
119	Սյունիքի 185, Ջ/Մ N-60369	40	1	Նոր տեղադրված
120	ք. Եղեգնաձոր Զ. Անդրանիկի 4 , ՀՀ Վայոց Ձորի Մարզի Դատախազություն	15	1	Փոխարինված
121	Նոր Նորքի 7-րդ գանգված 11, Նորքի Հայրորդաց Տուն	32	1	Տեղափոխված
122	Նոր Նորքի 7-րդ գանգված 11, Նորքի Հայրորդաց Տուն	40	1	Տեղափոխված
123	Զորավար Վարդան 35, Եղեգնաձորի թիվ 5 մանկ.	15	1	Փոխարինված
124	Երևանյան խճուղի 22, «Կոշիկ» ՓԲԸ	15	1	Փոխարինված
125	Նարեկացի 3ա 5, Մելքոնյան Թաթև ԱԶ	15	1	Փոխարինված
126	Երևանյան խճուղի, «Արա և Այծեմնիկ» ԲԲԸ	15	1	Փոխարինված
127	Երևանյան խճուղի 5, Սամվել Բարաջանյան ԱԶ	15	1	Փոխարինված
128	Նոր Կյուրին 21փողոց 3/2, Ալվարդ Բաղդասարյան	15	1	Նոր տեղադրված
129	Նոր Կյուրին 21փողոց 176, Վլադիմիր Աբրահամյան	15	1	Նոր տեղադրված
130	Նոր Կյուրին 21փողոց 182, Հարություն Ադամյան	15	1	Նոր տեղադրված
131	Նոր Կյուրին 21փողոց 159, Աշոտ Շահվերդյան	15	1	Նոր տեղադրված
132	Նոր Կյուրին 30 փողոց 1 նրբանցք 22, Սարգիս Եղիզարյան	15	1	Նոր տեղադրված
133	Նոր Կյուրին 21փողոց 60, Ալինա Հովհաննիսյան	15	1	Նոր տեղադրված
134	Նոր Կյուրին 21փողոց 56, Հրաչ Համբարձումյան	15	1	Նոր տեղադրված
135	Նոր Կյուրին 21փողոց 362/1, Ղազար Մկրտչյան	15	1	Նոր տեղադրված
136	Նոր Կյուրին 21փողոց 55, Անահիտ Հակոբյան	15	1	Նոր տեղադրված
137	Նոր Կյուրին 21փողոց 54, Իրինա Արարատյան	15	1	Նոր տեղադրված
138	Նոր Կյուրին 21փողոց 36, Ստեփան Շահբազյան	15	1	Նոր տեղադրված
139	Նոր Կյուրին 21փողոց 17, Ռոմիկ Զաքարյան	15	1	Նոր տեղադրված
140	Նոր Կյուրին 21փողոց 1, Լևոն Դարբինյան	15	1	Նոր տեղադրված
141	Գորիս, Ա. Բակունցի 2, ՀՀ ԱԻՆ ՓԾ Գորիսի ՀՓԶ	50	1	Փոխարինված
142	Վայք, Երիտասարդական 2, ՀՀ ՈՍՏ. ՎԱՅՈՅ ՁՈՐԻ ՄՎ ՎԱՅՔԻ ՈԲ	20	1	Փոխարինված
143	Եղեգնաձոր, Նարեկացի 2, ՀՀ ԱԱԾ Վայոց Ձորի ՄՎ Եղեգնաձորի բաժանմունք	20	1	Փոխարինված
144	Նաիրյան 164, Բ. Սևանի համայնքապետարան, Ցայտադրյուր	15	1	Նոր տեղադրված
145	Գ.Շատին, Շատին գյուղի միջնակարգ դպրոց	20	1	Փոխարինված
146	Երևանյան խճուղի 25, «Կարապետյան Արթուր» ԱԶ	15	1	Փոխարինված
147	Միկոյանի նրբանցք, Եղեգնաձորի թիվ 1 մանկապարտեզ	15	1	Փոխարինված
148	Ն. Կյուրին 21փողոց 140տուն, Վարժեպետյան Մարջիկ	15	1	Նոր տեղադրված
149	Ն. Կյուրին 21փողոց 150տուն, Հենրիկ Պողոսյան	15	1	Նոր տեղադրված
150	Ն. Կյուրին 21փողոց 71տուն, Մերգեյ Ավայան	15	1	Նոր տեղադրված
151	Ն. Կյուրին 21փողոց 97տուն, Անահիտ Արտեմյան	15	1	Նոր տեղադրված
152	Ն. Կյուրին 28փողոց 11տուն, Համլետ Պետրոսյան	15	1	Նոր տեղադրված
153	Գորիս, Արցախյան խճուղի 1/1, Գրանդ Դիլինգ ՄՊԸ	15	1	Փոխարինված
154	Գորիս, Մ. Մաշտոցի 169, Խնձորեսկ Տուր ՄՊԸ	15	1	Փոխարինված
155	Գորիս, Սաթյան 5/3, Շողիկ ԱԿ	15	1	Փոխարինված
156	Գավառ, Սայադյան 18, ՀՀ Դատական Դեպարտամենտ ՊԿՀ	15	1	Նոր տեղադրված
157	Նուբարաշեն Ե-1 թաղամաս 6-րդ հողամաս, Տաթևիկ Բալումյան	15	1	Տեղափոխված
158	Ք. Եղեգնաձոր Միկոյան փող., ՀՀ ՈՍՏ. Վայոց Ձորի Մարզային Վարչություն	25	1	Փոխարինված
159	Վարդենիս, Լ.Ազգալոյան 142, ԱՌԱԶԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱԴԱՆ	15	1	Նոր տեղադրված
160	Վարդենիս, Լ.Ազգալոյան 142, ԱՌԱԶԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱԴԱՆ	20	1	Նոր տեղադրված

161	Վարդենիս, Լ. Ազգադրյան 35, ՎԱՐԴԵՆԻՍ Ձ/Կ	15	1	Փոխարինված
162	Վարդենիս, Վ. Համբարձումյան 103, ՀԵՑ ՓԲԸ Գեղամա Ս/Ճ Վարդենիսի էլ. Ցանց	15	1	Փոխարինված
163	ք. Սիսիան, Խանջյան 12, Վարդանյան Ռաֆիկ	15	1	Փոխարինված
164	Ն. Կյուրին 21 փողոց 7, Միքայել Շերբեթյան	15	1	Նոր տեղադրված
165	Ն. Կյուրին 21 փողոց 9, Մակիչ Ցապովյան	15	1	Նոր տեղադրված
166	Ն. Կյուրին 21 փողոց 55, Սիրակ Հովսեփյան	15	1	Նոր տեղադրված
167	Ն. Կյուրին 21 փողոց 258, Ռոբերտ Պողոսյան	15	1	Նոր տեղադրված
168	Ն. Կյուրին 29 փողոց 14, Հասմիկ Վարդանյան	15	1	Նոր տեղադրված
169	Ն. Կյուրին 29 փողոց 12, Իշխան Առաքելյան	15	1	Նոր տեղադրված
170	Ն. Կյուրին 29 փողոց 39, Սամվել Դավթյան	15	1	Նոր տեղադրված
171	Ն. Կյուրին 29 փողոց 41, Միքայել Ղուկյան	15	1	Նոր տեղադրված
172	Ն. Կյուրին 28 փողոց 1, Գենկա Վարդանյան	15	1	Նոր տեղադրված
173	Ն. Կյուրին 28 փողոց 4, Մարիամ Վարդանյան	15	1	Նոր տեղադրված
174	Ք. Մարտունի Մյասնիկյան 7, ՀՀ Ոստ. Գեղարքունիքի ՍՎ Մարտունու ՈԲ	20	1	Նոր տեղադրված
175	Ք. Ջերմուկ Կեչուտ, Ջերմուկ Գոլդ» ՍՊԸ	40	1	Փոխարինված
176	Նոր Կյուրին 29 փողոց 18, Լուսյա Սիրգաբեկյան	15	1	Նոր տեղադրված
177	Նոր Կյուրին 28 փողոց 5, Լիլիթ Մկրտչյան	15	1	Նոր տեղադրված
178	Նոր Կյուրին 21 փողոց 1 նրբանցք 8բ, Անուշ Բաբայան	15	1	Նոր տեղադրված
179	Նոր Կյուրին 21 փողոց 1 նրբանցք 38, Արթուր Մելիքյան	15	1	Նոր տեղադրված
180	Նոր Կյուրին 21 փողոց 85, Գրիգոր Եղիազարյան	15	1	Նոր տեղադրված
181	Նոր Կյուրին 21 փողոց 89, Մայիս Ռուշանյան	15	1	Նոր տեղադրված
182	Գ. Տեղ, Թիվ 1 միջն. դպրոց	20	1	Փոխարինված
183	Նոր Կյուրին 28 փողոց 4, Ալևտինա Սարգսյան	15	1	Նոր տեղադրված
184	Նոր Կյուրին 29 փողոց 61, Աշոտ Օհանջանյան	15	1	Նոր տեղադրված
185	Նոր Կյուրին 21 փողոց 109, Էմիլիա Տեր-Ղազարյան	15	1	Նոր տեղադրված
186	Նոր Կյուրին 21 փողոց 61, Հայկ Խաչատրյան	15	1	Նոր տեղադրված
187	Նոր Կյուրին 21 փողոց 44, Վարազդատ Մանուկյան	15	1	Նոր տեղադրված
188	Նոր Կյուրին 21 փողոց 4, Սամվել Հովսեփյան	15	1	Նոր տեղադրված
189	Նոր Կյուրին 21 փողոց 1 նրբ. 50, Հայկազ Ռուբենյան	15	1	Նոր տեղադրված
190	Դավիթ Բեկի 133, Արշանդ ՍՊԸ	25	1	Տեղափոխված
191	Շաքե-Սիսիան մայրուղի, Մարշալ Բալո ՍՊԸ	15	1	Փոխարինված
192	Չարենցի 5, «Սիսիանի մեծահասակների կրթության կենտրոն» հիմնադրամ	15	1	Փոխարինված
193	Սիսական 41/3, Պողոսյան Արման	15	1	Փոխարինված
194	գ. Սառնակունք, Սիսիան-Երևան մայրուղի, Նորաշ ՍՊԸ, Սառակունք գյուղի զազալցակայան	20	1	Փոխարինված
195	Արցախի 2, Սիսականի Հասկ ՍՊԸ, Սիսիան քաղաքի արաղաց	20	1	Փոխարինված
196	գ. Նորավան, Ջորամաս 60913, Սիսիանի հրաձգարան	20	1	Փոխարինված
197	Նորատուս համայնք, Ջին մաս 95414	40	1	Փոխարինված
198	ք. Դիլիջան, Կամարինի փ. 29/2, «Քեմի Կենտրոն» ՓԲԸ	15	1	Փոխարինված
199	Ք. Երևան, Բազրատունյաց 37/1	15	1	Նոր տեղադրված
200	Ք. Երևան, Ն. Շենգավիթ 5փ. 59/1	15	1	Նոր տեղադրված
201	գ. Ղուկասավան, միջնակարգ դպրոց	32	1	Փոխարինված
202	Գ. Ջրահովիտ, միջնակարգ դպրոց	15	1	Փոխարինված
203	Գ. Նոր Կյուրին, միջնակարգ դպրոց	15	1	Փոխարինված
204	Ք. Արմավիր, Սահմանապահների փ. 1 նրբ 4 տ, Աբրահամյան Ավետիս	15	1	Տեղափոխված
205	գ. Նորավան, 1 փող., 5տ., Պողոսյան Արաքսյա	15	1	Տեղափոխված
206	Ջրվեժ 2-29, Ա/Ջ Ռաֆիկ Վարդանյան	20	1	Նոր տեղադրված
207	Ք. ԳԱՎԱՌ, ԲՈՇՆԱՂՅԱՆԻ 17, "ՎՏԲ ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ" ՓԲԸ ԿԱՍՈ Ս/Ճ	15	1	Փոխարինված
208	ք. Արմավիր, Աբովյան փողոց 26տուն, Պողոս Կալուսյան	15	1	Տեղափոխված
209	Վարդենիս, Երիտասարդության փ. 112 6բն, Խաչատրյան Ավետիկ	15	1	Նոր տեղադրված
210	Վարդենիս, Երիտասարդության փ. 102. 59բն, Օհանյան Գևորգ	15	1	Նոր տեղադրված
211	Վարդենիս, Խ. Ստեփանյան փ. 192. 15բն, Սահակյան Անահիտ	15	1	Նոր տեղադրված

212	Վարդենիս, Ա. Մեսմանուկյան փ. 19շ. 22բն , Ղազարյան Վարդան	15	1	Նոր տեղադրված
213	գ.Շինուհայր Ավագահանք 1 հողամաս, «ԱՎԶԻ» ՍՊԸ	15	1	Փոխարինված
214	Ք.Գավառ Սայառյան 120, "ԳԱՎԱՌԻ" ՃՇՇ ԲԲԸ ՀԱԿՈՒԲՅԱՆ	15	1	Փոխարինված
215	Ռ.Մելիքյան 8/1, «ԳՈՐՇ ԱՐՁ» ՍՊԸ	15	1	Փոխարինված
216	Ք.Երևան, Չարենցի 1 նրբ 12	15	1	Տեղափոխված
217	Ք.Արմավիր, Շահումյան 25, Թիվ 2037 գորմաս	100	1	Նոր տեղադրված
218	Ք. Երևան, Բագրևանդի 24/6	20	1	Նոր տեղադրված
219	Գ.Նորապատ 9 փող. 10 տուն, Կոլյա Ավետիսյան	15	1	Փոխարինված
220	Արմավիր, Ամառանոցային փող. 3 նրբ.61 տուն, Իսրաել Վարդանյան	15	1	Փոխարինված
221	Ք.Երևան, Արարատյան փ. 90/9բ, «Ֆուրնիվուդ» ՍՊԸ	15	1	Նոր տեղադրված
222	Գ.փոքր Վեդի, Ստեփանյան 11, Զոյրա Ամրզադյան	20	1	Նոր տեղադրված
223	Ք.Դիլիջան, Զ/Մ 81152	50	1	Նոր տեղադրված
224	Ք. Դիլիջան, Զ/Մ 81153	50	1	Նոր տեղադրված
225	Ք.Դիլիջան, Զ/Մ 41507	15	1	Նոր տեղադրված

Շարունակվում են ուսումնասիրությունները, որոնց նպատակն է բացահայտել տարբեր քաղաքների խոշոր ծախս ունեցող իրավաբանական բաժանորդների կողմից սպառված էլեկտրաէներգիայի և սպառված ջրաքանակի ծավալների տարբերությունները, հասկանալ դրանց հիմքերը և առաջացման պատճառները: Արդյունքում հայտնաբերվել են տարբերություններ, որոնք ներկայացվել են Ընկերության պատասխանատու ստորաբաժանումներին՝ դիտարկման ու այդ ուղղությամբ համապատասխան քայլեր մշակելու և տարածաշրջանների տնօրինությունների հետ համատեղ իրագործելու նպատակով:

Քաղաք	Ուսումնասիրված խոշոր սպառողների ընդհանուր քանակ	Սպառած էլեկտրաէներգիայի միջին ծավալ (կՎտ/ժամ)	Սպառած ջրաքանակի միջին ծավալ (մ³)
Չարենցավան	39	144567	2926
Իջևան	35	92738	3956.6
Ալավերդի	19	87860.5	1531
<b>Ընդամենը</b>	<b>93</b>	<b>325165.5</b>	<b>8413.6</b>

### 1.3. Ջրահեռացման համակարգ

#### ➤ Քաղաք Երևան

➤ Էրեբունու փողոցի D=500մմ L=60մ ազրոցեմենտե հեղեղատար համակարգը ամբողջովին քայքայված էր և հետագա շահագործման համար ոչ պիտանի, իսկ տեղումների ժամանակ հեղեղատար համակարգը գրեթե չէր գործում: Խնդրի կարգավորման համար Էրեբունի փողոցով անցնող հեղեղատարը փոխարինվել է նոր D=500մմ L=60մ երկշերտ ծալքավոր պոլիէթիլենային խողովակով: Այժմ հեղեղատար համակարգը գործում է անխափան:



✓ Գ.Նժդեհի փողոց 99 շենքի կերամիկական կոյուղագիծը նստվածքների պատճառով խցանվել էր, և կեղտաջրերը լցվում էին բնակելի շենքի հարակից տարածքներ: Խնդիրը լուծելու նպատակով կառուցվել է  $D=250$ մմ  $L=30$ մ երկշերտ ծալքավոր պոլիէթիլենային խողովակներով կոյուղագիծ, նորոգվել և կարգի են բերվել դիտահորերը:



### ➤ Քաղաք Վայք

Ալավերդյան փողոցով անցնող (Ալավերդյան 83 շենքի մոտ)  $D=300$ մմ կոյուղատարի մոտ  $L=20$ մ հատվածը վնասված և ջարդված էր, կեղտաջրերը հոսում էին բաց առվակով՝ ստեղծելով հակասանիտարական վիճակ: Խնդրի կարգավորման համար կառուցվել է  $D=300$ մմ  $L=22$ մ երկշերտ ծալքավոր պոլիէթիլենային խողովակներով կոյուղագիծ և սեղադրվել նոր դիտահոր:



➤ **Քաղաք Եղեգնաձոր**

Ձ. Անդրանիկի փողոցի 19 շենքի D=200մմ կոյուղատարի հաճախակի խցանումների պատճառով կեղտաջրերը հոսում էին Անդրանիկի փողոցի 17 և 19 շենքերի բակային տարածքներով, լցվում շենքերի նկուղները՝ ստեղծելով հակասանիտարական վիճակ և զարշահոտություն:

Հատուկ փչող մեքենայով կոյուղատարի խցանման բացումը անարդյունք էր, քանի որ D=200մմ կոյուղագծի մոտ L=100մ հատվածի վրա դիտահորեր ընդհանրապես չկային:

Խնդրի լուծման համար Անդրանիկի 19 շենքի վերջին դիտահորից մինչև Անդրանիկի 17 շենքի առաջին դիտահոր ընկած հատվածում կառուցվել է D=200մմ L=12մ երկարությամբ երկշերտ պոլիէթիլենային կոյուղագիծ, այնուհետև գոյություն ունեցող կոյուղագծի L=100մ հատվածի վրա կառուցվել 1 նաև թվով 2 միջանկյալ դիտահոր: Կատարված աշխատանքներից հետո իրականացվել է Ձ. Անդրանիկ փողոցի թիվ 17 և 19 շենքերի L=220մ կոյուղագծի պրոֆիլակտիկ լվացում և արդյունքում կոյուղագիծը գործում է անխափան:



Հաշվետու ժամանակահատվածում ջրահեռացման ցանցում կատարված աշխատանքների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև բերված աղյուսակում:

**Աշխատանքների հակիրճ նկարագիրը**

N	Տեղամասի անվանումը	Կոյուղագծերի լվացում	Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում	Անձրևընդունիչների մաքրում	Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում
		<i>մ</i>	<i>հատ</i>	<i>հատ</i>	<i>մ</i>
1	Կենտրոն	1100	285	781	24
2	Հյուսիս	5390	315	335	0
3	Հարավ	735	410	366	12
4	Էրեբունի	670	185	276	60
5	Արմավիր	2010	73	0	12
6	Արտաշատ	3206	106	0	0
7	Արարատ	6180	106	0	0
8	Մասիս	0	58	0	0
9	Գավառ	65	5	0	0



10	Սևան	2300	68	0	78
11	Մարտունի	1320	13	0	0
12	Վարդենիս	2500	20	0	0
13	Ճամբարակ	0	0	0	0
14	Դիլիջան	732	26	0	0
15	Սիսիան	0	98	0	0
16	Գորիս	50	18	0	0
17	Եղեգնաձոր	188	5	0	0
18	Վայք	755	18	0	0
19	Ջերմուկ	0	15	0	0
20	Կապան	1110	31	0	0
21	Մեղրի	0	20	0	0
22	Արաբկիր	-	261	85	30
23	Մաշտոց	1310	214	166	-
24	Շահումյան	1523	108	27	38
25	Զեյթուն	375	481	288	-
26	Աբովյան	2235	100	-	-
27	Չարենցավան	1620	48	-	-
28	Հրազդան	1300	64	-	12
29	Աշտարակ	2150	26	-	-
30	Էջմիածին	2900	107	-	-
31	Արթիկ	-	37	-	-
32	Տաշիր	520	-	-	-
33	Իջևան	6000	8	-	-
34	Շիրակ	430	548	-	52
35	Ալավերդի	740	57	-	-
36	Աշոցք	-	8	-	-
37	Լոռի	7185	183	-	-
38	Սյիտակ	565	61	-	-
39	Նոյեմբերյան	160	32	8	24
40	Բերդ	-	9	-	-
41	Ստեփանավան	430	10	-	-
42	Ապարան	-	18	-	-
43	Թալին	-	6	-	-
<b>Ընդամենը</b>		<b>57754</b>	<b>4261</b>	<b>2332</b>	<b>342</b>

#### 1.4 Կեղտաջրերի մաքրում և հեռացում

Հաշվետու ամսում «Կեղտաջրերի հեռացման և մաքրման կայանների» բաժնի ենթակայության տակ գտնվող կեղտաջրերի մաքրման կայաններում և պոմպակայաններում կատարվել են բազմաթիվ վթարավերականգնողական աշխատանքներ, մասնավորապես .



✓ «Ջերմուկ» ԿՄԿ-ում մանր ճաղավանդակի ռեդուկտորի և շարժիչի միջև գտնվող խծուծը շարքից դուրս էր եկել, որի հետևանքով ռեդուկտորից առաջացել էր յուղի արտահոսք դեպի շարժիչը: Այն փոխարինվել է նորով և այժմ աշխատում է անխափան: Ստուգվել են նաև մնացած բոլոր ռետուկտորները և շարժիչները:

✓ «Վարդենիս» ԿՄԿ-ի տարածքում գտնվող պոմպակայանի «HOMA» մակնիշի պոմպերը դուրս են բերվել հորի միջից, ստուգվել են պոմպերի հերմետիկությունը և յուղի մեջ ջրի առկայությունը:

✓ «Գավառ», «Մարտունի» և «Վարդենիս» ԿՄԿ-ներում ստուգվել են տիղմի կոնվեյերները և նրանցում առկա պոլիէթիլենային պաշտպանիչ պատյանները, որտեղ հայտնաբերվել է



պոլիէթիլենային պատյանների անհավասարաչափ մաշվածություն: Վերը նշված շերտերի երկարակեցությունն ապահովելու նպատակով կատարվել են տեղափոխություններ:

«Դիլիջան» ԿՄԿ-ում տեխնոլոգիական մասնաշենքում գտնվող 5 տոննա տարողությամբ մաքուր ջրի կոնտեյներից դուրս եկող խողովակի ձևավոր մասերից առաջացել էր ջրի արտահոսք, որը վտանգ էր ստեղծել էլեկտրական վահանակի համար:

Խնդիրը կարգավորվել է այդ ձևավոր մասերի փոխարինման արդյունքում: Կատարվել են նաև մի շարք աշխատանքներ. ավտոտնակի և պահեստի ջեռուցման համակարգը անջատվել է ընդհանուր համակարգից՝ գազի ծախսի կրճատման նպատակով, վերանորոգվել է ջեռուցման կաթսան, ինչպես նաև վերանորոգվել է լվացարանին կցված կոյուղու պոմպը, որից առաջացել էր հոսանքի կորուստ և վտանգ էր ներկայացնում աշխատակիցների համար:

✓ Սևանի N3 և N5 կոյուղու պոմպակայաններում պոմպերը դուրս են բերվել հորից, իրականացվել են տեխնոլոգիական աշխատանքներ, որի արդյունքում ստուգվել է պոմպերի հերմետիկությունը, յուղի և անտիֆրիզի որակը և քանակը: Արդյունքում միայն N5 ԿՊ-ի մեկ պոմպի յուղն է պակաս եղել իր սահմանաչափից, որն էլ ավելացվել է:

Բոլոր ԿՄԿ-ներում և ԿՊ-ներում իրականացվել են պրոֆիլակտիկ աշխատանքներ, ստուգվել են բոլոր սարքերը (թե էլեկտրական, թե մեխանիկական), կատարվել են կարգավորումներ:

h/h	Գտնվելու վայրը	Կառույցի անվանումը	Մղված կեղտաջրերի ծավալը, մ <sup>3</sup>	Մաքրված կեղտաջրերի ծավալը, մ <sup>3</sup>	Կեղտաջրից առանձնացած կեղտ, տ
1	Ք. Գավառ	«Գավառ» ԿՄԿ	-	74 932	21.6
2	Ք. Մարտունի	«Մարտունի» ԿՄԿ	-	89 507	18
3	Ք. Վարդենիս	«Վարդենիս» ԿՄԿ	-	185 115	3.6
4	Ք. Ջերմուկ	«Ջերմուկ» ԿՄԿ	-	152 880	19
5	Ք. Դիլիջան	«Դիլիջան» ԿՄԿ	-	127 483	9
6	Ք. Սևան	«Սևանի» N3 պ/կ	17 721	-	-
7	Ք. Սևան	«Սևանի» N5 պ/կ	8 530	-	-
8	Ք. Գավառ	«Գավառ» պ/կ	17 100	-	-
9	Ք. Վարդենիս	«Վարդենիս» պ/կ	11 700	-	-
10	Ք. Ջերմուկ	«Ջերմուկ» պ/կ	7 782	-	-

## 1.5. Էներգոհամակարգ

### ➤ Քաղաք Գյումրի

Նպատակ ունենալով ավելացնել ջրամատակարարման շարունակությունը, բարձրացնել ցանցի հուսալիությունը, վերացնել ջրի ճնշման հետ կապված խնդիրները, ինչպես նաև նվազեցնել սպառված էլեկտրաէներգիայի ծախսը Ընկերությունը իրականացնում է հին, խորհրդային արտադրության մեծ էներգատարությամբ պոմպերը նոր, էներգախնայող և բարձր օգտակար գործողության գործակից ունեցող պոմպերով փոխարինելու աշխատանքներ: Մասնավորապես՝ փոխարինվել է Կամոյի փողոցի 38, 40 շենքի պոմպը, ինչի արդյունքում խնայվել է ամսական 1.560կՎտ/ժամ էլեկտրաէներգիա:

### Կատարված աշխատանքների նկարագիրը

h/h	Հասցե	Աշխատանքի նկարագրություն
1	Արաբկիր 51փող. 3շ.	պոմպի վերանորոգում, պոմպի զննում և կարգավորում
2	ք. Եղվարդ Սումգայիթի թաղ.	Էլ. համակարգի վերանորոգում, պոմպի զննում և կարգավորում
3	Սիսակյան 22	Էլ. համակարգի վերանորոգում, պոմպի զննում և կարգավորում
4	Ուլնեցու 66ա	Էլ. համակարգի վերանորոգում, Ջննում, Կարգավորում
5	Ահարոնյան 5	Էլ. համակարգի վերանորոգում, Ջննում, Կարգավորում
6	Շինարարներ 15/1	պոմպի աշխատանքի կարգավորում
7	Աղբյուր Սերոբ 11/3	պոմպի աշխատանքի կարգավորում
8	Գյուլբեկյան 29ա	պոմպի աշխատանքի կարգավորում
9	Կոմիտաս 42	պոմպի աշխատանքի կարգավորում
10	Սիլիկյան թաղ	պոմպի վերանորոգում, պոմպի զննում և կարգավորում
11	Կոնդ 5-րդ թաղ	պոմպի վերանորոգում, պոմպի աշխատանքի զննում
12	ք. Եղվարդ	Էլ. համակարգի վերանորոգում, պոմպի և էլ. սարքերի զննում և կարգավորում
13	Փափազյան 11	Էլ. համակարգի վերանորոգում, զննում և կարգավորում
14	Բաբայան 34	Էլ. համակարգի վերանորոգում, զննում և կարգավորում
15	Ռ. Մելիքյան 2/2 - 31	պոմպի վերանորոգում, էլ.սարքերի զննում և կարգավորում

16	Ռ. Մելիքյան 2/1	պոմպի վերանորոգում, պոմպի զննում
17	Ծերենց 5շ	Էլ. համակարգի վերանորոգում, էլ.սարքերի վերանորոգում
18	Սունդուկյան 90շ	պոմպի վերանորոգում, պոմպի զննում
19	Պարոնյան 28/1 - 19	պոմպի վերանորոգում, 2h առանցքակալ, 1h ավտոմատ անջատիչ, 1h ցածր ճնշման ռելե
20	Զովունի	պոմպի վերանորոգում, պոմպի զննում և կարգավորում
21	Օրբելի 63/1	պոմպի վերանորոգում, պոմպի զննում
22	Մամիկոնյանց 27	պոմպի վերանորոգում, պոմպի զննում և կարգավորում
23	Ազատության 25	պոմպի վերանորոգում, պոմպի զննում և կարգավորում
24	Բաղրամյան 1 նրբ.14շ	պոմպի վերանորոգում, պոմպի զննում և կարգավորում
25	Ա.Ավետիսյան 70	Էլ. համակարգի վերանորոգում, փոխվել է ֆազի բացակայության ռելե, 1 ավտոմատի կառավարիչ, 1 ավտոմատ անջատիչ
26	Ա.Խաչատրյան 26	Էլ. համակարգի վերանորոգում, Ջննում և կարգավորում
27	Կոմիտաս 42	Էլ. համակարգի վերանորոգում, Ջննում և կարգավորում
28	Ավետիսյան 67	Էլ. համակարգի վերանորոգում, աշխատանքի կարգավորում
29	Ծաղկաձոր	Էլ. համակարգի վերանորոգում, պոմպի և էլ. սարքերի զննում
30	Հրազդան միկրոշրջան	Էլ. համակարգի վերանորոգում, պոմպի և էլ. սարքերի զննում
31	Կ.Ուլենցու 66	Էլ. համակարգի վերանորոգում, զննում
32	Կ. Ուլենցու 66/1 - 45	պոմպի վերանորոգում, փոխվել է 1 ավտոմատ անջատիչ, 1 հատ բարձր ճնշման ռելե և 1 հատ եռաֆազ թողարկիչ
33	Զովունի 9փ 125 հանր.	Էլ. համակարգի վերանորոգում, էլ.սարքերի վերանորոգում
34	Մամիկոնյանց 23	Էլ. համակարգի վերանորոգում, Ջննում, կարգավորում
35	ԳՐԻԲՈՅԵԴՈՎԻ 2/1 - 6	պոմպի վերանորոգում, 2հատ առանցքակալի և 1 վերանորոգման հավաքածուի փոխարինում
36	Գյուլբենկյան 43	պոմպի վերանորոգում, պոմպի աշխատանքի զննում, կարգավորում
37	ք.Էջմիածին	Էլ. համակարգի վերանորոգում, էլ.հաշվիչների փոխում
38	Կոմիտաս 44 - 68	պոմպի վերանորոգում, պոմպի աշխատանքի կարգավորում
